Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 ծածկագրով <<Երևանի թիվ 109 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նոր շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30.09.2019թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Աշ. Գրիգորյան
Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 24 561 000 (քսանչորս միլիոն հինգ հարյուր վաթսունմեկ հազար) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ	15 360 000	-	15 360 000
2	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ համատեղ գործունեություն	19 900 000	3 980 000	23 880 000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

դ) Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը որոշել է կասեցնել 23.09.2019թ. նիստը և հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

1.2 27.09.2019թ. կայացած նիստին գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ.

- <<Կարոշիննախագիծ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող <<Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության

թույլտվություն չպահանջող աշխատանքների)>> լիցենզիայի <<էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր>> ներդիրը,

- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված N1-ի 3-րդ կետում նշված է, որ պայմանագրի կատարումն իրականացվելու է թվով 10 աշխատակիցների միջոցով՝ հրավերով պահանջվող նվազագույնը 11-13 աշխատակիցների փոխարեն:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, իսկ հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո, բայց ոչ ուշ, քան 01.10.2019թ.:

1.4 Մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ	բավարար
2	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ համատեղ գործունեություն	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշում է.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին՝ <<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ին, ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Աշ. Գրիգորյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան